ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/58

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «Արգոհշին» ՍՊԸ-ի 11.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Արգոհշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.04.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.

Մայիսյանի համայնքապետարանի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից Մայիսյան համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝Ընթացակարգ/:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա ՀՀ Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի 1 փողոց 52 շենք հասցեում՝ 2018թ. ապրիլի 7-ին ժամը 9:00-ին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել երկու մասնակից՝ «Արգոհշին» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/ և «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ կողմից հրավերով սահմանված օրը, սահմանված ժամին կայացել է հայտերի բացման նիստը:

Ըստ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ն առաջարկել է 3,500,000 ՀՀ դրամ, իսկ «Արգոհշին» ՍՊԸ-ն՝ 5,760,000 ՀՀ դրամ:

«Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, այն է թվերով գրված է 3,500,000, իսկ տառերով՝ երեք միլիոն հինգ հարյուր ՀՀ դրամ:

Սակայն, Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 09.04.2018թ. հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը:

Վերը նշված որոշման համաձայն՝ Ընթացակարգին հայտ են ներկայացրել երկու մասնակից, սակայն Պատվիրատուն հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած, քանի որ Մայիսյան համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթում տեղ են գտել թերություններ:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 33-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում

բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 58-րդ կետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքում ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, Մայիսյանի համայնքապետարանի կողմից Մայիսյան համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 07.04.2018թ. ժամը 9:00-ին:

Ընթացակարգին մասնակցել են «Արգոհշին» ՍՊԸ-ն և «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

«Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, այն է թվերով գրված է 3,500,000, իսկ տառերով՝ երեք միլիոն հինգ հարյուր ՀՀ դրամ:

Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 09.04.2018թ. հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը, որի համաձայն Պատվիրատուն հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած, քանի որ Մայիսյան համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքների ծավալաթերթում եղել են թերություններ:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Մայիսյանի համայնքապետարանի «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետով, 37-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 58-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը, և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ որպես նվազագույն գին ներկայացրած հաջորդ մասնակից «Արգոհշին» ՍՊԸ-ին ճանաչեր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Պատվիրատուն գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած, չներկայացնելով որևէ պատշաճ հիմնավորում, թե ընթացակարգով նախատեսված աշխատանքների ծավալաթերթում ինչ թերություններ են

եղել և այդ թերությունների պատճառով արդյոք Հանձնաժողովը ուներ իրավասություն ընթացակարգը չկայացած հայտարարելու:»:

Ելնելով վորոգրյալից՝ «Արգոհշին» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորոցնել Մայիսյանի համայնքապետարանի կողմից Մայիսյան համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Բողոքի քննության նպատակով բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>ՀՀ Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արմավիրի մարզի Մայիսյան համայնքը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից 11.04.2018թ. բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Մայիսյան համայնքի հերթական նիստի թիվ 21-Ա որոշմամբ որոշում է կայացվել համայնքի փողոցներում լուսավորություն անցկացնելու համար նախատեսել 5,500,000 ՀՀ դրամ և առաջարկվել է համայնքի ղեկավարին կազմակերպել մրցույթ:

Համայնքի ղեկավարի 03.04.2018թ,. թիվ 4-Ա կարգադրությամբ ստեղծվել է ապրանքների գնման, աշխատանքների և ծառայությունների մատուցման հանձնաժողով, որից հետո կազմվել է ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01 ծածկագրով մրցույթի փաթեթը, որը հրապարակվել է համապատասխան կայքում:

2018թ. ապրիլի 7-ին ժամը 9:00-ին կայացել է Հանձնաժողովի նիստը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, որ գնման ընթացակարգի հրավերում կան վրիպակներ, այն է՝ ծավալաթերթ-նախահաշվում ընդհանուր արժեքը հրապարակված է եղել 6,570,000 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում ավագանու որոշմանը:

Աշխատանքների մեջ ներառված չի եղել «Ազատամարտիկների պուրակի» լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների վերաբերյալ ծավալաթերթ-նախահաշիվը: Ուստի Հանձնաժողովը որոշում է կայացրել դադարեցնելու մրցույթը:

2018թ. ապրիլի 7-ին համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հրավիրվել է համայնքի ավագանու արտահերթ նիստ: Նիստում ներկայացվել է պարզաբանումը, և մրցութային հանձնաժողովի կայացրած որոշումը, որից հետո, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 58-րդ կետով՝ համայնքի ավագանին կայացրել է համապատասխան որոշում ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01 ծածկագրով մրցույթը չկայացած հայտարարելու մասին»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Մայիսյան համայնքի ղեկավար Եսայի Մովսիսյանը և ներկայացուցիչ Միեր Աբգարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/58 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Արգոհշին» ՍՊԸ-ի 11.04.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավերներ), «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 07.04.2018թ. N1 արձանագրությունը, Մայիսյան համայնքի ավագանու 30.03.2018թ. նիստի թիվ 21-Ա որոշումը, Մայիսյան համայնքի ավագանու 07.04.2018թ. արտահերթ նիստի թիվ 26-Ա որոշումը, Պատվիրատուի հայտնած դիրքորոշումը.

ՀՀ Արմավիրի մարզի Մայիսյան համայնքապետարանի կողմից Մայիսյան համայնքի լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծի հավելված թիվ 1-ի՝ ծավալաթերթ-նախահաշվի համաձայն՝ աշխատանաների ընդհանուր արժեքը կազմել է 6,570,000 ՀՀ դրամ:

Համաձայն «Արգոհշին» ՍՊԸ-ի 11.04.2018թ. ներկայացրած բողոքի՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Արգոհշին» ՍՊԸ-ն և «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ն, որոնք Հրավերով սահմանված օրը և ժամին՝ 07.04.2018թ. ժամը 9:00-ին, Հանձնաժողովի կողմից բացվել են:

Ըստ բողոքաբերի, «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 3,500,000 ՀՀ դրամ, իսկ «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

գնային առաջարկը՝ 5,760,000 ՀՀ դրամ: Ընդ որում, «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է եղել անհամապատասխանություն, այն է՝ գնային առաջարկը թվերով գրված է եղել «3,500,000», իսկ տառերով՝ «երեք միլիոն հինգ հարյուր ՀՀ դրամ»:

Սակայն, Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում 09.04.2018թ. հրապարակվել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը, որի համաձայն՝ գնման ընթացակագը չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, իսկ ավելի ուշ՝ 13.04.2018թ. Պատվիրատուն նույն կայքում հրապարակել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ փոփոխված որոշումը, որի համաձայն՝ գնման ընթացակագը չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

«Արգոհշին» ՍՊԸ-ն բողոքներ քննող անձնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Մայիսյանի համայնքապետարանի «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ-ԱՇՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կոպտորեն խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք դրույթներով սահմանված պահանջներ, մասնավորապես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետով, 37-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 58-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մերժել «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը, և որպես նվազագույն գին ներկայացրած հաջորդ մասնակից՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչեր «Արգոհշին» ՍՊԸ-ին: Սակայն, ըստ բողոքաբերի, Պատվիրատուն գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ աշխատանքների ծավալաթերթում առկա թերությունների պատճառով, չներկայացնելով որևէ պատշաճ հիմնավորում, թե արդյոք Հանձնաժողովն ուներ ընթացակարգը չկայացած հայտարարելու օրենսդրությամբ վերապահված իրավասություն:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ի սկզբանե Մայիսյան համայնքի ավագանու կողմից որոշվել է համայնքի փողոցներում լուսավորություն անցկացնելու համար նախատեսել 5,500,000 ՀՀ դրամ և համայնքի ղեկավարին առաջարկվել է այդ ֆինանսական միջոցների հատկացման շրջանակներում կազմակերպել մրցույթ: Համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որի կողմից կազմված ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01 ծածկագրով մրցույթի հրավերը հրապարակվել է տեղեկագրում: 2018թ. ապրիլի 7-ին

ժամը 9:00-ին՝ Ընթացակարգի հայտերի բացման նիստին, Հանձնաժողովի նախագահը տեղեկացրել է, որ գնման ընթացակարգի հրավերում կան վրիպակներ, այն է՝ ծավալաթերթ-նախահաշվում ընդհանուր արժեքը հրապարակված է եղել 6,570,000 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանել ավագանու որոշմանը (աշխատանքների մեջ ներառված չի եղել լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների որոշ հատվածի ծավալաթերթ-նախահաշիվը): Վերոգրյալով պայմանավորված՝ 2018թ. ապրիլի 7-ին համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ հրավիրվել է համայնքի ավագանու արտահերթ նիստ, որի ընթացքում համայնքի ավագանին կայացրել է որոշում՝ «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին: Հիմք ընդունելով նշված որոշումը՝ Հանձնաժողովը ևս որոշում է կայացրել ընթացակարգը դադարեցնելու մասին:

Պատվիրատուի ղեկավարը բողոքներ քննող անձին ներկայացրեց նաև Մայիսյան համայնքի ավագանու 30.03.2018թ. նիստի թիվ 21-Ա որոշումը, որով համայնքի փողոցներում լուսավորություն անցկացնելու համար նախատեսվել է 5,500,000 ՀՀ դրամ, ինչպես նաև Մայիսյան համայնքի ավագանու 07.04.2018թ. արտահերթ նիստի թիվ 26-Ա որոշումը, որով համայնքի ավագանին կայացրել է «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 33-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում արձանագրությունը պարունակում է դրա հիմնավորումը:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 34-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

• 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին մասի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

• 58-րդ կետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

«ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

• 7.4 կետի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե

առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ԿԲ փոխարժեքով:

•10.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը նույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Այսպիսով, բողոքներ քննող անձը արձանագրում է, որ.

- Ընթացակարգի Հրավերում ծավալաթերթ-նախահաշվում աշխատանքների ընդհանուր արժեքը հրապարակված է եղել 6,570,000 ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանել Մայիսյան համյանքի ավագանու որոշմամբ նախատեսված գումարի չափին՝ 5,500,000 ՀՀ դրամ:

- «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է եղել անհամապատասխանություն, այն է՝ գնային առաջարկը թվերով գրված է եղել «3,500,000», իսկ տառերով՝ «երեք միլիոն հինգ հարյուր ՀՀ դրամ»:

- Հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին Մայիսյան համայնքի ավագանու 07.04.2018թ. արտահերթ նիստի թիվ 26-Ա որոշման հիման վրա:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովի՝ ՀՀ ԱՄ ՄՀ ՀՄԱ ԱՇՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն ընդունվել է համայնքի ավագանու համապատասխան որոշման հիմնա վրա, ինչը համապատասխանում է Կարգի 58-րդ կետով սահմանված պահանջին:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ Հանձնաժողովը պետք է մերժեր «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը, և որպես նվազագույն գին ներկայացրած՝ հաջորդ մասնակից, «Արգոհշին» ՍՊԸ-ին ճանաչեր 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, ապա բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վահրամ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի տառերով և թվերով գրված գումարների միջև տեղ գտած անհամապատասխանությունը հիմք չի հանդիսանում նշված մասնակցի հայտը մերժելու համար, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ սահմանված է, որ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արգոհշին» ՍՊԸ-ի 11.04.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ